ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

10-րդ դասարան

1. Քերթողահայր Մովսես Խորենացին V դարի հայ մատենագրության ամենանշանավոր դեմքն է. նրա անչափելի մեծությունը գիտակցվել է թե՛ իր ժամանակակիցների, թե՛ հետնորդների կողմից: Նա բնութագրվել է «Տիեզերահռչակ», «Պատմահայր», «Քերթողահայր» պատվանուններով: Նա առաջինն էր, որ ստեղծեց հայ ժողովրդի քննական, գիտական և ամբողջական պատմությունը՝ հայ ժողովրդի ծննդյան վկայականը՝ սկսած ծագումնաբանությունից մինչև իր ապրած ժամանակը:Խորենացին թողել է բավականին հարուստ ժառանգություն: Բացի նշանավոր «Հայոց պատմություն»- ից մեզ են հասել նրա հետևյալ աշխատությունները՝«Թուղթ առ Սահակ Բագրատունի», «Պատմություն Հռիփսիմյանց», «Հաղագս Վարդավառի», «Հաղագս պիտոյից», ապաշխարանքի բազմաթիվ երգեր, թարգմանություններ: Խորենացին իր «Հայոց պատմությունն» ստեղծել է ***Աստվածաշունչ*** մատյանի նմանությամբ ու կառուցվածքով՝ «Մեր մեծերի ծննդաբանությունը», «Միջին պատմություն մեր նախնիների», «Մեր հայրենիքի պատմության ավարտը»: Այս իսկ պատճառով ***Պատմությունն*** ավարտվում է «Ողբ»-ով, որտեղ Պատմահայրը ողբում է հայոց պետականության վերացումը, իր ուսուցիչների մահը, սրանց նպաստող քաղաքական, սոցիալական և այլ պատճառներ: Իր ավերակ երկրի և իր ուսուցիչների գերեզմանների առջև կանգնած՝ մեծ հայրենասերը ողբում է.«Ողբում եմ քեզ Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ՝ բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ,, խորհրդականդ և ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը…….Ավա՜ղ այս զրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմության: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին»:

Հիրավի, անկարելի էր դիմանալ այդ ցավերին, քանի որ Խորենացին էլ ենթարկվել էր անլուր տառապանքների. այս մասին գրել է նաև Ղազար Փարպեցին իր նշանավոր «Թղթում»:

Խորենացու ողբը հայրենիքի անկման ողբն է, որովհետև ավարտվում էր մեր հայրենիքի պատմությունը՝ որպես երկիր, որպես պետություն: Այնուհետև՝ մինչև IX դարը(և մինչ այսօր), Հայաստանը ապրելու է Խորենացու հանճարեղ ուսուցչի ստեղծած անընտգյուտ այբուբենով. 36 անպարտելի գրերը փոխարինեցին և՛ պետություն, և՛թագավորություն, և՛ զորք, և՛ բանակ:

Որովհետև, ինչպես փաստել է Մեծն Սևակը.

…..Այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար…

Քերթողահոր ժառանգությունը հայ ժողովրդի հարատևման մեծագույն հաջողությունն է, որը մեզ տանում է դեպի Գալիք, դեպի անմահություն:

2. Հատվածը վերաբերում է Ղազար Փարպեցուն՝ V դարի մեծանուն պատմիչներից մեկին. հատվածը պատկանում է հենց իրեն՝ Փարպեցուն, ով իր նշանավոր «Թուղթ առ Վահան Մամիկոնյան։ Ստախոս աբեղաների մեղադրությունը» ուղերձում հիմնավոր փաստերով ապացուցում է իր անմեղությունը՝ մերկացնելով «….Փուչ ու տգետ» հոգևորականներին, ովքեր ամբաստանել էին առաջադեմ ու կրթված Փարպեցուն։«Թուղթ»-ում նա գրում է. «Մանկության օրերի իմ կյանքը դու ինքդ, տեր,լավ գիտես», քանի որ Փարպեցու մանկությունն անցել է Վրաստանում՝ Աշուշա բդեշխի պալատում, ապագա մարզպան Վահան Մամիկոնյանի հետ։ Աշուշա բդեշխի կինը Վահան Մամիկոնյանի մորաքույրն էր, իսկ նրանց ուսուցիչը Վահանի մորեղբայրն էր, ով եղել է Մաշտոցի աշակերտներից։ Վահան Մամիկոնյանը հավատացել է իր մանկության ընկերոջը՝ քաջ իմանալով նրա ազնիվ բնավորությունը, Ամիդից հետ է կանչում հալածական Փարպեցուն և նրան հանձնում Սուրբ Կաթողիկեի եկեղեցին՝ իր վանքերով։ Վանահայր դարձած Փարպեցին բարեկարգել է վանքը, հիմնել մատենադարան՝ փաստորեն անելով ձեռագրահավաք գործունեության առաջին քայլերը։
Ինչպես Խորենացին, այնպես էլ Ղազար Փարպեցին ենթարկվել է բազում հալածանքների։ Փարպեցին ամեն վատի հիմքը համարում է նախանձը, բանսարկությունը՝ նա իրեն համարում է «անզգույշ մարդ», որը չի հասկացել իր դեմ նյութվող դավադրությունը։ Վահան Մամիկոնյանը նրան հանձնարարում է գրել «Հայոց պատմություն», որն ավարտվում է Վահանանց պատերազմով, Վահան Մամիկոնյանի մարզպան նշանակվելով։
Ղազար Փարպեցին Ոսկեդարի վերջին խոշորագույն դեմքն է, նրանով փակվում է Ոսկեդարը՝ հայ ժողովրդի հիրավի ամենաշռայլ շրջաններից մեկը։

3. Հայ հին բանահյուսության անկրկնելի մարգարիտները՝ միակ առասպելը և գրեթե մեկ տասնյակ վիպերգերը մեզ են հասել Քերթողահոր շնորհիվ։ Հայտնի փաստ է , որ հին վիպերգերը՝ առասպելական պատմություններով ու երգերով, պարունակում են պատմական անհերքելի փաստեր, որոնց մեջ ներկայացվում են մեր ժողովրդի ծագումը, պետականության կազմավորումը, զարգացումը, նրա հաղթական և ազատագրական պայքարը։
Ահա այսպիսի մի հրաշալի վիպերգ է «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը, որը «Արտաշես և Արտավազդ » վիպերգի II դրվագն է։ Խորենացին այս վիպերգը լսել է Գողթան երգիչներից, ովքեր բամբիռների վրա երգել են մեր սիրելի թագավորների սխրանքները, հաղթանակները։Առանձնակի ժողովրդականություն է վայելել «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը, քանի որ մեր պատմության քառուղիներում ժողովուրդը քիչ է ունեցել սիրելի թագավորներ։ Արտաշես Առաջինին ժողովուրդն անվանել է Արտաշես Ա Բարի թագավոր, քանի որ նրա թագավորության տարիներին, ինչպես հավաստում է Պատմահայրը, «անմշակ հող չմնաց», «գետերն ու ծովերը նավարկելի դարձան», ժողովուրդն ապրեց բարեկեցիկ և ուրախ։ Արտաշես

Առաջինը գահակալել է մ.թ.ա. 189-160թթ-ին: Նա հիմնադրեց Արտաշատ քաղաքը. քաղաքի նախագծումը և կառուցումը Արտաշեսը վստահեց Կարթագենի զորավար Հաննիբալին, որը փախել էր Հայաստան. այդ պատճառով էլ քաղաքը կոչվում է նաև երկրորդ Կարթագեն կամ Հայկական Կարթագեն (կառուցվել էր գրեթե նույն նախագծով):
Վիպերգը պատմում է ալանների՝ լեռնական ցեղերի հետ միաբանվելու և Հայոց աշխարհի վրա հարձակվելու մասին:
Արի արքան հավաքում է իր զորքը, պարտության մատնում թշնամուն՝ գերեվարելով նրանց արքայազնին: Ալանների առաջնորդը ստիպված հաշտություն է խնդրում և մերժվում հայոց արքայից: Այդ ժամանակ ալանների արքայադուստր Սաթենիկը, որ գտնվում էր հոր ճամբարում, գալիս կանգնում է Կուր գետի ափին գտնվող մի դարավանդի վրա և իմաստուն խոսքերով դիմում Արտաշեսին, նա խնդրում է լսել իր խոսքերը «Ե՛կ հավանեա՛ց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ»: Ինչու՞: Նա վկայակոչում է հզորների օրենքը. «Զի վասն միոյ քինու ո՛չ է օրէն դիւցազանց՝ Զայլոց դիւցազանց զարմից.....»: Նա հիշեցնում է , որ հզորները միշտ ավելի խաղաղասեր և ներողամիտ պիտի լինեն: Արտաշեսը հիանում է խելամիտ օրիորդի խոսքերով, շտապում է ափ և, տեսնելով նրա աստվածային գեղեցկությունը, ցանկանում է կնության առնել նրան: Այդ մասին Սմբատ Բագրատունին հայտնում է ալանների թագավորին , սակայն ալանների թագավորը մեծ գլխագին է պահանջում իր դստերը կնության տալու համար: Այդ ժամանակ Արտաշեսը, հետևելով հին սովորությանը, փախցնում է Սաթենիկին:

Հեծաւ արի արքայն Արտաշես ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթն ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Այնուհետև արքան շատ ոսկի ու մորթեղեն է տալիս ալանների թագավորին և ամուսնանում խելացի գեղեցկուհու հետ:
Իհարկե, Արտաշեսը նախ լսում է օրիորդին, ապա տեսնում նրան, ուրեմն ավելի շատ հիանում է նրա խելքով, և հետո միայն՝ գեղեցկությամբ:
Հետևությունը մեկն է՝ միայն գեղեցկությունը չէր կարող հրապուրել հայոց թագավորին, ով ամենից առաջ շահագրգիռ էր իր երկրի խաղաղությամբ ու բարեկեցությամբ: Վկան՝ ժողովրդի կողմից նրան տրված մականունը՝ Բարի, Բարեպաշտ:

4. «Սասունցի Դավիթ» էպոսի վերջին ճյուղն է «Փոքր Միհրը»։ Ըստ էության փոքր Միհրը մեր ժողովրդի թաքնված երազանքն է. անարդարությանն ու կեղծիքին չդիմացած հայոց հողը իր հերոսին փակում է Ագռավա քարում՝ մինչև կգան արդարության հաղթանակի ժամանակները։ Ծնողների կորստից հետո մեն-մենակ է մնում Միհրը. նա դեգերում է երկրից երկիր , հալածում թշնամու զորքին, հեղեղից փրկում է մի ամբողջ քաղաք՝ լեռներից վիթխարի ժայռեր գլորելով գետի մեջ։ Ամեն գնով փորձում է վերականգնել արդարությունը, սակայն ուժասպառ է լինում, որովհետև ահագնացած անարդարության պատճառով հողն այլևս ի զորու չէ պահել նրա ծանրությունը։ Ամեն ինչից հոգնած հերոսը այցի է գնում ծնողների շիրիմին, աղերսում է ուղի ցույց տալ իրեն և շիրմից եկող ծնողների ձայնը նրան ուղարկում է Ագռավու քար .նա պետք է այնտեղ մնա այնքան ժամանակ, մինչև՝

Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,
Որ գետին քո ձիու առջև դիմանա.
Աշխարք քոնն է.

Միհրը ճանապարհվում է դեպի Ագռավաքար.ճանապարհին՝ Ոստանա Կապանում, իշխանը փորձում է ցանցով բռնել Միհրին ու իր ձիուն, սակայն անհաղթ դյուցազնը թրով կտրում է ցանցը և ազատվում։ Այնուհետև Աստծուն խնդրում է՝

Որ կամ կռիվ տա իրեն,
Կամ իրեն ամանաթ առնի։

Աստված ուղարկում է յոթ գլխավոր հրեշտակներին՝ կռվելու Միհրի դեմ, սակայն Միհրը ի զորու չէ հաղթել նրանց , որովհետև հողը նրա առջև թուլացել էր, և Միհրը որոշեց գնալ Վանա քար։ Որոշեց զարկել քարին, եթե քարը ճեղքվեր, ուրեմն ինքը մեղավոր չէր, իսկ եթե չկտրեց, մեղավոր է. Քարը ճեղքվում է, և Միհրը Քուռկիկ Ջալալու հետ փակվում է քարում։ Ուրեմն՝ մեղավոր էր անարդար ժամանակը, իսկ մեր ժողովրդի հերոսը մեղք չուներ դրանում։ Տարին երկու անգամ՝ «Վարդևորին և Համբարձման» քարը բացվում է, Միհրը դուրս է գալիս՝ փորձելու՝ հողը կպահի՞ իրեն։

Սակայն հողը չի պահում նրան, և նա նորից փակվում է։ Մի Համբարձման գիշեր մի հովիվ մոտենում է քարին, քարը բացվում է, և հովիվը ներս է մտնում ու տեսնում «հսկա մի մարդ էդտեղ նստած»։ Հովիվը հարցնում է , թե Միհրը երբ է դուրս գալու։

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն եղավ քանց մասուր մի,
Ու գարին էլավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն։

Իսկ որպեսզի կատարվի այն, ինչ ասում էր Միհրը, պետք է երկրի վրա հաստատվի արդարություն, աշխարհում լինի խաղաղություն, մարդիկ սիրեն միմյանց, զբաղվեն աշխարհաշեն աշխատանքով, որպեսզի հողը կարողանա պահել արդարության մարտիկին։ Երևի այդ ժամանակ ցորենը կլինի մասուրի չափ, իսկ գարին՝ ընկույզի։ Ես անչափ շատ եմ ուզում հավատալ Միհրի դուրս գալուն, և եթե ես կարող եմ ինչ-որ չափով նպաստել այդ շքեղ օրվա այգաբացին, ես պատրաստ եմ։

Վերջին ենթահարցը աշակերտի ինքնուրույն մտածողության արգասիք պետք է լինի։

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման չափանիշներ

10-րդ դասարան

1-ին հարց

1-2, 4 ենթահարցեր՝	2-ական միավոր
3-րդ ենթահարց՝	4 միավոր

2-րդ հարց

1-ենթահարց՝	2 միավոր
2-ենթահարց՝	8 միավոր

3-րդ հարց

1, 3- ենթահարցեր՝	4- ական միավոր
2 – ենթահարց՝	2 միավոր

4-րդ հարց

1-2-րդ ենթահարցեր՝	4-ական միավոր
3-ենթահարց՝	2 միավոր

Յուրաքանչյուր հարց գնահատվում է առավելագույնը 10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան